

Հաստատված է
«Մեծահասակների կրթություն և
ուսումնառություն ողջ կյանքի ընթացքում»
հասարակական կազմակերպության 16.04.2011թ.
ընդհանուր ժողովում

Նախագահ՝ _____ Ա.Սարգսյան

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
«Մեծահասակների կրթություն և ուսումնառություն
ողջ կյանքի ընթացքում» հասարակական կազմակերպության անդամության և Խորհրդի
գործունեության

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն Կանոնակարգը կարգավորում է «Մեծահասակների կրթություն և ուսումնառություն ողջ կյանքի ընթացքում» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Կազմակերպություն) Խորհրդի գործունեությունը, ինչպես նաև Կազմակերպությանը անդամակցելու և անդամությունը դադարեցնելու գործընթացները:
2. Սույն կանոնակարգը մշակված է ՀՀ օրենսդրությանը համաձայն և համահունչ է Կազմակերպության կանոնադրությանը:

ԳԼՈՒԽ 2. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆԸ

3. Կազմակերպությունում անդամությունը բացառապես կամավոր է:
4. Կազմակերպությունը ներառում է անհատ անդամներ:
5. Կազմակերպության անդամ կարող են դառնալ 16 տարին լրացած ՀՀ կամ օտարերկրյա քաղաքացիներ, քաղաքացիություն չունեցող անձինք, ովքեր ընդունում են Կազմակերպության կանոնադրությունը:
6. Կազմակերպությանը անդամակցելու համար անձը Կազմակերպության նախագահին ներկայացնում է գրավոր դիմում՝ համաձայն սույն Կանոնակարգի հավելվածում բերված ձևի:
7. Կազմակերպության անդամի ընդունման կամ դիմումը մերժելու մասին որոշումը կայացվում է Կազմակերպության Խորհրդի կողմից՝ թեկնածուի դիմումը ստանալու պահից մեկամսյա ժամկետում:
8. Կազմակերպության անդամակցությունը դադարեցվում է Կազմակերպությունից կամավոր դուրս գալու մասին Կազմակերպության անդամի դիմումի համաձայն, որը հասցեագրված է Կազմակերպության նախագահին:
9. Կազմակերպության անդամը ստանում է Կազմակերպության անդամության վկայական, որը համարակալվում և գրանցվում է Գրանցամատյանում:
10. Կազմակերպության անդամի հաշվառումը կատարվում է Կազմակերպության Խորհրդի կողմից հաստատված հրահանգի համաձայն:

11. Կազմակերպության անդամները մուծում են ամենամյա անդամավճար, որի չափը սահմանում է Կազմակերպության Համաժողովը:

12. Անդամակցության մերժման հիմք կարող են ծառայել՝

- 1) դիմողի կողմից իր մասին սխալ տեղեկություններ հայտնելը,
- 2) այլ պատճառներ՝ Խորհրդի որոշմամբ:

ԳԼՈՒԽ 3. ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

13. Կազմակերպության անդամն իրավունք ունի՝

- 1) ընտրել և ընտրվել Կազմակերպության բարձրագույն և ղեկավար մարմիններում,
- 2) առաջադրել և ազատորեն քննարկել Կազմակերպության ներքին և արտաքին քաղաքականության հարցերը, մասնակցել Կազմակերպության ղեկավար մարմինների որոշումների մշակմանը և դրանց իրագործմանը,
- 3) Կազմակերպության աշխատանքները բարելավելու կամ դրանցում տեղ գտած թերություններն ու բացթողումները վերացնելու նպատակով զեկույցներ, դիմումներ, գանգատներ, հայտարարություններ և առաջարկություններ ներկայացնել Կազմակերպության Համաժողովին, Կազմակերպության Խորհրդին, Կազմակերպության Նախագահին, ստորաբաժանումների ղեկավարներին ու ստանալ դրանց պատասխանները,
- 4) տեղեկություն ստանալ Կազմակերպության գործունեության մասին,
- 5) մասնակցել Կազմակերպության կողմից կազմակերպված միջոցառումներին,
- 6) իր հասարակական գործունեության մեջ ստանալ Կազմակերպության աջակցությունն ու պաշտպանությունը,
- 7) ազատորեն դուրս գալ Կազմակերպության անդամությունից:

14. Կազմակերպության անդամը պարտավոր է՝

- 1) նպաստել Կազմակերպության նպատակների և խնդիրների իրագործմանը,
- 2) մասնակցել Կազմակերպության աշխատանքներին և կազմակերպված միջոցառումներին,
- 3) սահմանված չափով և կարգով մուծել անդամավճար,
- 4) իր գործունեությամբ բարձր պահել Կազմակերպության հեղինակությունը,
- 5) գործել Կազմակերպության կանոնադրության և հասարակական էթիկայի նորմերին համապատասխան,
- 6) պահպանել Կազմակերպության խորհրդանշանից և նույնականացման այլ նշաններից օգտվելու՝ Կազմակերպության խորհրդի կողմից սահմանված կարգը, առանց թույլտվության չօգտագործել դրանք,
- 7) կատարել Կազմակերպության ղեկավար մարմինների որոշումները,
- 8) կատարել օրենքով և սույն կանոնակարգով նախատեսված այլ պահանջներ:

15. Կազմակերպության անդամները կազմակերպության ունեցվածքի մեջ չունեն բաժնի իրավունք:

16. Կազմակերպության կանոնադրական պահանջները, նրա բարձրագույն և ղեկավար մարմինների որոշումները չկատարելու կամ ոչ պատշաճ ձևով կատարելու, Կազմակերպության աշխատանքներին անհարգելի պատճառով չմասնակցելու, այն ձախողելու կամ որևէ ձևով խանգարելու, ինչպես նաև Կանոնադրությանը չհամապատասխանող

գործունեություն ու վարքագիծ ցուցաբերելու դեպքում՝ Կազմակերպության անդամի նկատմամբ կիրառվում են կարգապահական տույժի միջոցներ, ընդհուպ Կազմակերպության անդամությունից զրկելը:

17. Կազմակերպության անդամությունից զրկման մասին որոշումը կայացվում է Կազմակերպության Խորհրդի կողմից՝ ձայների պարզ մեծամասնությամբ: Կազմակերպության անդամությունից զրկված անձն իրավունք ունի բողոքարկելու այդ որոշումը կայացնող մարմնի վերադաս մարմնին:

18. Կազմակերպության անդամները առաջնահերթության կարգով կարող են օգտվել Կազմակերպության ծառայություններից:

19. Կազմակերպության անդամները կարող են ակնկալել Կազմակերպությունից իրավական պաշտպանություն՝ մասնագիտական հարցերի առնչությամբ:

ԳԼՈՒԽ 4. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԿԱՄՆԵՐԻ ԱԿՈՒՄԲԸ

20. Կազմակերպության հետագա զարգացման, նրա հեղինակության բարձրացման և հասարակության հետ կապերի ամրապնդման նպատակով ստեղծվում է Կազմակերպության բարեկամների ակումբ (այսուհետև տեքստում՝ Ակումբ):

21. Ակումբի անդամները կրթության, գիտության, տնտեսության տարբեր ոլորտների, ինչպես նաև քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ են, ովքեր պատրաստակամ են որևէ կերպ աջակցել Կազմակերպության գործունեությանը:

22. Ակումբի անդամ կարող է դառնալ այն անձը, որը ստացել է Կազմակերպության համապատասխան հրավերը՝ վերջինիս Խորհրդի որոշմամբ: Ակումբի անդամին տրվում է նրա անդամությունը հաստատող վկայական, որը գրանցվում է նույն կարգով, ինչ որ Կազմակերպության անդամի վկայականը:

23. Ակումբի անդամի թեկնածություն կարող է առաջադրվել Կազմակերպության յուրաքանչյուր անդամի կողմից:

24. Ակումբի անդամը կարող է՝

- 1) առաջարկություններ ներկայացնել Կազմակերպության գործունեության ռազմավարական ուղղությունների և ծրագրերի վերաբերյալ.
- 2) օժանդակել Կազմակերպությանը՝ ծրագրեր նախաձեռնելու, մշակելու և իրականացնելու գործում.
- 3) նպաստել լայն հասարակության, մասնավորապես՝ պետական և տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, ոչ պետական, հասարակական և քաղաքական կազմակերպությունների, գործատուների և գործարարների, արհմիությունների և այլ գործընկերների հետ համագործակցության ամրապնդմանը.
- 4) աջակցել Կազմակերպության կանոնադրական նպատակներն իրագործելու համար ֆինանսական միջոցների հայթայթմանը կամ տրամադրել դրանք:

25. Ակումբի անդամն օգտվում է տեղեկատվություն ստանալու և Կազմակերպության կազմակերպած միջոցառումներին մասնակցելու՝ Կազմակերպության անդամների հետ հավասար իրավունքներից:

26. ՀԿ Ակումբի անդամը կարող է գրկվել Ակումբի անդամության իրավունքից՝ ՀԿ համաժողովի որոշմամբ կամ իրենց ցանկությամբ:

ԳԼՈՒԽ 5. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

27. Կազմակերպության ֆինանսական միջոցները ձևավորվում են անդամների անդամավճարներից, ինչպես նաև իրավաբանական և ֆիզիկական անձանց, այդ թվում՝ Կազմակերպության անդամների, կամավոր նվիրատվություններից, Կազմակերպության ունեցվածքի օգտագործման և նրա ստեղծած կազմակերպությունների ձեռնարկատիրական գործունեության արդյունքներից:

28. Կազմակերպության մուտքավճարի չափը սահմանվում է 0 (զրո) ՀՀ դրամ:

29. Անդամավճարի չափը սահմանվում է 15.000 (տասնհինգ հազար) ՀՀ դրամ տարեկան:

30. Անդամավճարները վճարվում են կանխիկ կամ փոխանցմամբ, տարին մեկ անգամ նախորդ տարվա սեպտեմբերից մինչև ընթացիկ տարվա ապրիլի 30-ը: Անդամները կարող են հանձնարարել երրորդ կողմ հանդիսացող ֆիզիկական կամ իրավաբանական այլ անձանց մուծումները կատարել իր փոխարեն:

31. Անդամավճարների մուծման վերահսկման իրավասությունը Խորհրդին է:

32. Թոշակառու (չաշխատող) և տարբեր խոցելի խմբեր ներկայացնող անդամների անդամավճարի չափը Խորհրդի որոշմամբ կարող է զեղչվել 50%-ով՝ անդամի դիմումի հիման վրա:

33. Նույն ընտանիքի անդամ հանդիսացող (ամուսին, զավակ, ծնող, քույր, եղբայր) անդամների անդամավճարի չափը Խորհրդի որոշմամբ կարող է զեղչվել մինչև 40%՝ ընտանիքի անդամ հանդիսացող անդամների համատեղ դիմումի հիման վրա:

ԳԼՈՒԽ 6. ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՅՈՒՄ

34. Կազմակերպությունում անդամությունը կարող է դադարեցվել անդամի գրավոր դիմումի, ինչպես նաև հեռացման մասին Խորհրդի որոշման հիման վրա:

35. Անդամի հեռացման վերաբերյալ Խորհրդի որոշման հիմք կարող են ծառայել՝

- 1) Կազմակերպության կանոնադրության և սույն կանոնակարգի դրույթների խախտումը,
- 2) անդամավճարներ չմուծելը,
- 3) այլ հանգամանքներ՝ Խորհրդի որոշմամբ:

ԳԼՈՒԽ 7. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

36. Կազմակերպության Խորհուրդը բաղկացած է 11 հոգուց , ներառյալ՝ Կազմակերպության Նախագահը):

37. Կազմակերպության Խորհուրդը՝

- 1) ընտրվում է Կազմակերպության համաժողովի կողմից երկու տարի ժամկետով և համարվում է Կազմակերպության ղեկավար մարմինը համաժողովների միջև ընկած ժամանակահատվածում,
- 2) սահմանում է Կազմակերպության որոշումները Կազմակերպության անդամների կողմից բողոքարկելու կարգը,

- 3) իրավասու է որոշում ընդունել գույք ձեռք բերելու, տիրապետելու, օգտագործելու տնօրինելու և այլ նմանատիպ հարցերի վերաբերյալ,
 - 4) քննարկում և որոշումներ է կայացնում Կազմակերպության գործունեությանն առնչվող բոլոր հարցերի վերաբերյալ, բացառությամբ այն հարցերի, որոնք մտնում են Կազմակերպության համաժողովի իրավասությունների մեջ,
 - 5) նախապատրաստում և հրավիրում է կազմակերպության համաժողովներ,
 - 6) որոշում է կայացնում Կազմակերպությանն անդամագրվելու և անդամությունից զրկելու վերաբերյալ,
 - 7) հաստատում է Կազմակերպության միջոցառումների տարեկան պլանները, ծրագրերը և հսկում դրանց կատարման ընթացքը,
 - 8) Կազմակերպության նախագահի ներկայացմամբ հաստատում է Կազմակերպության հաստիքացուցակը և դրույքաչափերը,
 - 9) սահմանում է Կազմակերպության ղեկավար մարմիններում ընդգրկված անձանց Կազմակերպության կողմից վարձատրելու կարգը,
 - 10) որոշումներ է ընդունում Կազմակերպության առանձնացված ստորաբաժանումներ, ներկայացուցչություններ և մասնաճյուղեր, ինչպես նաև կազմակերպություններ, հիմնարկներ, հանձնաժողովներ, բաժիններ, աշխատանքային խմբեր, լրատվական միջոցներ ստեղծելու և լուծարելու, դրանց ղեկավարներին նշանակելու և ազատելու վերաբերյալ,
 - 11) որոշում է կայացնում տնտեսական ընկերություններ ստեղծելու կամ դրանց մասնակցելու վերաբերյալ,
 - 12) ունի օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:
38. Կազմակերպության Խորհրդի նիստը կարող է հարցեր քննարկել և որոշումներ կայացնել, եթե նիստին մասնակցում են խորհրդի անդամների ընդհանուր թվի առնվազն 2/3-ը: Որոշումներն ընդունվում են նիստի մասնակիցների ձայների պարզ մեծամասնությամբ:
39. Կազմակերպության խորհուրդն իր հերթական նիստերը հրավիրում է երեք ամիսը առնվազն մեկ անգամ:
40. Կազմակերպության խորհրդի արտահերթ նիստ կարող է հրավիրվել Կազմակերպության նախագահի կողմից կամ անդամների ընդհանուր թվի առնվազն 2/3-ի գրավոր պահանջով:
41. Խորհրդի հերթական նիստերը կարող են գումարվել նախատեսվածից ավելի հաճախ, բայց ոչ ավելի հաճախ, քան 40 օրը մեկ անգամ՝ բացառությամբ սույն Կանոնակարգի 33-րդ կետում նշված դեպքերի:
42. Խորհրդի անդամներն անհրաժեշտության դեպքում կարող են մասնակցել նիստերին հեռավար կարգով՝ կապի թվային և էլեկտրոնային միջոցների կիրառմամբ, ինչպես նաև իր ձայնը Խորհրդի անդամներից որևէ մեկին գրավոր հավաստմամբ փոխանցելու միջոցով:

ԳԼՈՒԽ 8. ԵԶՐԱՓՄԱԿԻՉ ԴՐՈՒՑԹՆԵՐ

43. Սույն Կանոնակարգը, ինչպես նաև դրանում կատարվող փոփոխությունները հաստատում է Կազմակերպության ընդհանուր ժողովը:

44. Սույն կանոնակարգն ուժի մեջ է մտնում ընդհանուր ժողովում հաստատվելու պահից:

45. Սույն Կանոնակարգի և Կազմակերպության կանոնադրության դրույթների հնարավոր անհամապատասխանության դեպքում գերակայում է Կանոնադրությունը:

ՅՈՐ